

Ծրագիր

«Բյուջեներ քաղաքացիների համար»

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անվանում	Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության N S 1 ծածկագրով գնման մրցույթ
Ժամկետներ	17, հունվար 2023թ. - 15, նոյեմբեր 2026, առավելագույնը 217 փորձագիտական օր (1 փորձագիտական օրը բաղկացած է 8 ժամից)
Փորձագետ(ներ)ի ծառայության մատուցման վայր	ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակային տարածք 2

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին: Իրավաբանների հայկական ասոցիացիայի ստեղծման հիմնական նպատակն էր համախմբել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը, որպես անկախ, ժողովրդավարական, իրավական պետություն: Կազմակերպությունն իրականացնում է ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների հակակոռուպցիոն և օրենքի գերակայության խթանմանն ու ուժեղացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր: Կազմակերպության մասին մանրամասներին կարող եք ծանոթանալ կազմակերպության <https://armla.am/> պաշտոնական կայքում:

Ծրագրի մասին

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ից (ղեկավար կազմակերպություն), «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ներից (համաիրականացնող կազմակերպություններ) բաղկացած կոնսորցիումի կողմից՝ Եվրոպական Միության կողմից տրված դրամաշնորհի շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին և նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության ուժեղացված մասնակցությանը: «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը իրականացվում է Երևանում և ՀՀ մարզերում: Ծրագրի տևողությունը 4 տարի է;

Սույն գնման մրցույթի իրականացման հիմնարար սկզբունքներ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը գնումներ իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ հիմնարար սկզբունքներով.

1. «Խտրականության արգելքի սկզբունք»՝ բացառելով գնումների իրականացման գործընթացում ռասայական, գենդերային, կրոնական, ազգային (ազգության կանոնի պահպանում) կամ էթնիկական հիմքով որևէ խտրականության դրսևորում,
2. «Բաց և ազատ մրցակցության կանոնների պահպանման սկզբունք»՝ անաչառ, փաստաթղթավորման և մրցակցային գնումների իրականացում, զուրկ որևէ տեսակի առանձնահատուկ վերաբերմունքից ու շահերի բախումից,
3. «Լավագույն գին փողի դիմաց (լավագույն որակ/գին հարաբերակցությունը) սկզբունք»՝ գնումների գործընթացում հաղթողին որոշելու համար, կամ, as appropriate, նվազագույն գնի կիրառում,
4. «ԵՄ սանկցիոն ցուցակի կանոնի պահպանման սկզբունք»՝ բացառելով որևէ անձի որը ըդգրկված է ԵՄ սանկցիոն ցուցակում, գնումների գործընթացին մասնակցությունը,
5. «Ծագման կանոնի (Rule of origin) պահպանման սկզբունք»:

2. ՓՈՐՁԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության հիմնական նպատակն է աջակցել «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում զարգացնելու շահերի պաշտպանության իրականացման, հանրային քաղաքականությունների մշակման, ՔՀԿ-ների զարգացման, բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումների իրականացնելու ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների կարողությունները:

3. ՓՈՐՁԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հիմնական առաջադրանքները

Համագործակցելով ծրագրի աշխատակազմի, միջազգային և տեղական մյուս փորձագետների հետ՝ փորձագետ(ներ)ը ծառայությունների մատուցման շրջանակներում պետք է իրականացնի (ներ) հետևյալ առաջադրանքները.

- ՔՀԿ-ների համար ջատագովության գործիքների վերաբերյալ հանրամատչելի (պարզ և հասկանալի) ուղեցույցի մշակում,
- ՔՀԿ-ների կարողությունների ելակետային գնահատման արդյունքների հիման վրա ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի և նրանց կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքի հետևյալ բաժինների մեթոդոլոգիայի ու բովանդակության մշակում.
 - շահերի պաշտպանության իրականացում.
 - հանրային քաղաքականությունների մշակում.

- կարիքահեն հարակից կարողություններ (ինչպես օրինակ՝ ռազմավարական պլանավորում, գենդերային հավասարության ապահովում և/կամ այլն),
- «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Շահերի պաշտպանության իրականացում» (օրինակ՝ ինչ է շահերի պաշտպանությունը, հիմնահարցի վերլուծություն և սահմանում, արտաքին միջավայրի գնահատում, կոալիցիաների ձևավորում, ՇՊ արշավ, պետական մարմինների հետ աշխատանք՝ կառուցողական երկխոսություն և հանրային քաղաքականությունների բարելավում և/կամ այլն) և «Կարիքահեն հարակից կարողություններ» (օրինակ՝ ռազմավարական պլանավորում, ինքնագնահատում և զարգացման պլանի մշակում, գենդերային հավասարության ապահովում ֆինանսական կայունության ենթահամակարգ, ղեկավարման ենթահամակարգ և/կամ այլն) բաժինների ուսուցման ծրագրերի մշակում, այդ երկու բաժինների ուսուցման ծրագրերի շրջանակներում առավելագույնը 16 նյութերի (յուրաքանչյուր բաժնի շրջանակներում առավելագույնը 8 նյութ) պատրաստում և դասավանդում,
- ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային առկա ձևաչափով (խորացված փուլ) ուսուցման «Պետական բյուջեների ոլորտներում մասնակցության ապահովում և շահերի պաշտպանության իրականացում» մոդուլի ուսուցման ծրագրի մշակում և այդ ծրագրի շրջանակներում շրջանակներում թիրախային 4 թեմաներով դասախոսությունների առավելագույնը 4 նյութերի պատրաստում և դասավանդում,
- Պատկան մարմինների կողմից մշակված բյուջետային հայտերի և նախագծերի ծրագրի շահառու ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպվելիք հանրային քննարկումներին և երկուստեք հանդիպումներին մասնակցություն,
- Ծրագրի շահառու ՔՀԿ-ների կողմից ներկայացրած հանրային քաղաքականությունների բարելավմանն ուղղված փաստարկված վերլուծությունների և առաջարկությունների ներկայացում,
- Ծրագրի շահառու ՔՀԿ-ներին ծրագրի թիրախ 4 ոլորտներում Հանրային քաղաքականությունների բարելավման և ՇՊ քարոզարշավների և իրազեկման մոդելային պլանների մշակում և ՔՀԿ-ներին դրանց վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- Ծրագրի շրջանակներում կազմակերպվելիք միջոցառումներին մասնակցություն և ծրագրի շահառու ՔՀԿ-ներին ու երիտասարդ մասնագետներին շահերի պաշտպանության և կարիքահեն կարողությունների զարգացման ոլորտներում ցուցաբերած աջակցության և ձեռք բերված արդյունքների ներկայացում,
- Անհրաժեշտության դեպքում, ծրագրից և մատուցվող ծառայության էությունից բխող, ծրագրի ղեկավարի կողմից հանձնարված այլ առաջադրանքների և պարտականությունների իրականացում:

Ակնկալվող արդյունքները

- ՔՀԿ-ների համար ջատագովության գործիքների վերաբերյալ հանրամատչելի ուղեցույցը մշակված է և կիրառվում է:
- ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի և նրանց կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքի ՔՀԿ-ների շահերի պաշտպանության ու կարիքահեն հարակից կարողությունների զարգացման իրականացման բաժինների մեթոդաբան ու բովանդակությունը մշակված է և կիրառվում է,

- «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Շահերի պաշտպանության իրականացում» և «Կարիքահեն հարակից կարողություններ» բաժինների ուսուցման ծրագրերը մշակված է և կիրառվում է,
- «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Շահերի պաշտպանության իրականացում» և «Կարիքահեն հարակից կարողություններ» բաժինների ուսումնական ծրագրի շրջանակներում առավելագույնը 16 նյութերը պատրաստված և դասավանդված է,
- ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային առկա ձևաչափով ուսուցման «Պետական բյուջեների ոլորտներում մասնակցության ապահովում և շահերի պաշտպանության իրականացում» մոդուլի ուսուցման ծրագիրը մշակված է և կիրառվում է,
- ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային առկա ձևաչափով ուսուցման «Պետական բյուջեների ոլորտներում մասնակցության ապահովում և շահերի պաշտպանության իրականացում» մոդուլի ուսուցման ծրագրի շրջանակներում թիրախային 4 թեմաներով առավելագույնը 4 նյութերը պատրաստված և դասավանդված է,
- Պատկան մարմինների կողմից մշակված բյուջետային հայտերի և նախագծերի ծրագրի շահառու ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպվելիք հանրային քննարկումներին և երկուստեք հանդիպումներին փորձագետ(ներ)ի մասնակցությունն ապահովված է,
- Ծրագրի շահառու ՔՀԿ-ների կողմից ներկայացրած հանրային քաղաքականությունների բարելավմանն ուղղված փաստարկված վերլուծությունները և առաջարկությունները փորձագետ(ներ)ի կողմից պատրաստված և ներկայացված է պատկան մարմիններին,
- Ծրագրի շահառու ՔՀԿ-ներին ծրագրի թիրախ 4 ոլորտներում Հանրային քաղաքականությունների բարելավման և ՇՊ քարոզարշավների և իրազեկման մոդելային պլանները մշակված է և ՔՀԿ-ներին դրանց վերաբերյալ խորհրդատվությունը տրամադրված է,
- Ծրագրի շրջանակներում կազմակերպվելիք միջոցառումներին ծրագրի շահառու ՔՀԿ-ներին ու երիտասարդ մասնագետներին շահերի պաշտպանության և կարիքահեն կարողությունների զարգացման ոլորտներում ցուցաբերած աջակցությունը և ձեռք բերված արդյունքները ներկայացված են:

4. ՓՈՐՁԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Փորձագետ(ներ)ին ներկայացվող մասնագիտական պահանջներ.

- Բարձրագույն կրթություն իրավագիտության, հանրային կառավարման, հանրային քաղաքականության կամ համանման այլ ոլորտներում,
- առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ,
- մեծ ՔՀԿ-ներում հանրային քաղաքականությունների և/կամ դրանցում խնդիրների վեր հանման, փոփոխությունների մշակման և պետական մարմինների (ՀՀ կառավարության, ՀՀ ֆինանսների, արդարադատության, գյուղատնտեսության, սոցիալական, կրթության հարցերը համակարգող նախարարությունների հետ կառուցողական ջատագովման (շահերի պաշտպանության) իրականացման առնվազն 3 տարվա փորձառություն,

- ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ոլորտում առնվազն 3 տարվա փորձառություն,
- ՔՀԿ-ների համար փաստաթղթեր (Շահեր պաշտպանության ռազմավարություն/պլան, Ռազմավարական պլան, Զարգացման պլան և այլն) մշակելու առնվազն 3 տարվա փորձառություն,
- իրավական ակտերի և նախագծերի ռիսկերի վեր հանման և առաջարկությունների մշակման փորձառություն,
- հանրային քաղաքականությունների մշտադիտարկման իրականացման, մշտադիտարկման գեկույցներ մշակելու փորձառություն,
- պատկան մարմինների կողմից մշակած բյուջետային հայտերի հանրային քննարկումների կազմակերպման և/կամ մասնակցության փորձառություն,
- ՔՀԿ ոլորտի վերաբերյալ բարձր տեղեկացվածություն և ընկալում,
- ուսումնական նյութերի, այդ թվում՝ առցանց մոդուլների, մշակման և դասընթացներ/վերապատրաստումներ անցկացնելու փորձառություն,
- գործողությունների/վերջնական արդյունքների վրա կենտրոնանալու կարողություն՝ միննույն ժամանակ ցուցաբերելով որակ, արդյունավետություն, ճշգրտություն և աշխատանքը սահմանված ժամկետներում կատարելու կարողություն,
- հայերեն և անգլերեն լեզվի գերազանց իմացություն, նյութերի մշակման հմտություն, բարդ մտքերը և գաղափարները ճիշտ ձևակերպելու ունակություն,
- ստեղծագործ մտածողություն և նախաձեռնողականություն,
- համակարգչային գիտելիքներ:

Լրացուցիչ պահանջներ

- բարեվարքության և հակակոռուպցիոն արժեքների բարձր ընկալում, [ԻՀԱ արժեքների](#) ընդունում,
- թիմային և անկախ աշխատելու կարողություններ.
- աշխատանքային ծանրաբեռնվածությամբ ծառայություններ մատուցելու կարողություն,
- արագ կողմնորոշելու և որոշում կայացնելու կարողություն,
- վերջնաժամկետներում աշխատելու կարողություն,
- պատասխանատվության բարձր զգացողություն:

5. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Փորձագետ(ներ)ի ծառայությունը պետք է ներառի սույն տեխնիկական առաջադրանքի 2-րդ կետով նախատեսված փորձագետ(ներ)ի ծառայության առարկայի վերաբերյալ համանման փորձի ուսումնասիրությունը, դրա հիման վրա հիմնական առաջադրանքներով նախատեսված նյութերի նախագծումը, դրանց քննարկումները ծրագրի աշխատակազմի և փորձագետների, ծրագրի պոտենցիալ շահառուների և այլ շագրգիռ անձանց հետ, նախագծված բոլոր նյութերի խմբագրումն ու դրանց ավարտական տարբերակների պատրաստումը, իսկ դասավանդման և ներկայացման նյութերի դեպքում նաև դրանց դասավանդումն ու ներկայացումը:

Փորձագետ(ներ)ի ծառայությունը պետք է ներառի նաև ծրագրի նյութերի հետազոտում, որը ներառում է, սակայն սահմանափակված չէ հետևյալ փաստաթղթերով. ծրագրի առաջարկ,

տրամաբանական կառուցվածք, հաշվետվություններ, հայեցակարգային փաստաթղթեր, հաղորդակցության նյութեր և այլն:

Առցանց ուսուցման յուրաքանչյուր թեման պետք է բաղկացած լինի տեսանյութից, ինֆոգրաֆիկաներ ընդգրկող տեքստային նյութից, Power point ծրագրի օգնությամբ կազմված պրեզենտացիայից, տվյալ թեմայի վերաբերյալ առցանց այլ նյութերի հղումներից և թեմայի վերաբերյալ գիտելիքները ստուգող հարցաշարից:

Առկա ուսուցման յուրաքանչյուր թեման պետք է բաղկացած լինի ինֆոգրաֆիկաներ ընդգրկող տեքստային նյութից, Power point ծրագրի օգնությամբ կազմված պրեզենտացիայից և թեմայի վերաբերյալ գիտելիքները ստուգող հարցաշարից:

6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

Փորձագետ(ներ)ի ծառայությունների մատուցման սկիզբ է համարվում 2023թ.-ի հունվարի 17-ը: Ծառայությունները պետք է մատուցվեն ըստ ներկայացված ժամանակացույցի և ավարտվեն ոչ ուշ, քան 2026թ.-ի նոյեմբերի 15-ը: Ստորև ներկայացված աղյուսակով նախատեսված 1-ից 8-րդ առաջադրանքները փորձագետ(ներ)ի ծառայության կողմից պետք է կատարվեն «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի իրականացման 1-ին տարվա, իսկ 9-ից 13-րդ առաջադրանքները՝ 2-ից 4-րդ տարիների ընթացքում:

Առաջադրանքներ	Յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացվող ժամանակ
1. ՔՀԿ-ների համար ջատագովության գործիքների վերաբերյալ հանրամատչելի ուղեցույցի մշակում, քննարկում, վերանայում և ավարտական տարբերակի պատրաստում	22 օր
2. ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի և նրանց կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքի շահերի պաշտպանության իրականացման բաժնի մեթոդոլոգիայի ու բովանդակության մշակում, քննարկում, վերանայում և ավարտական տարբերակի պատրաստում	12 օր
3. ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի և նրանց կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքի կարիքահեն հարակից կարողությունների զարգացման բաժնի մեթոդոլոգիայի ու բովանդակության մշակում, քննարկում, վերանայում և ավարտական տարբերակի պատրաստում	12 օր

<p>4. «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Շահերի պաշտպանության իրականացում» բաժնի ուսուցման ծրագրի մշակում, քննարկում, վերանայում և ավարտական տարբերակի պատրաստում</p>	<p>10 օր</p>
<p>5. «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Կարիքահեն հարակից կարողություններ» բաժնի ուսուցման ծրագրի մշակում, քննարկում, վերանայում և ավարտական տարբերակի պատրաստում</p>	<p>10 օր</p>
<p>6. «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Շահերի պաշտպանության իրականացում» բաժնի ուսումնական ծրագրի շրջանակներում առավելագույնը 8 նյութերի պատրաստում, քննարկում, վերանայում, ավարտական տարբերակների պատրաստում և դասավանդում</p>	<p>32 օր</p>
<p>7. «Բյուջեի գիտելիքի փոխանակման» էլեկտրոնային նորարար հարթակի ուսումնական կլաստերի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց երկու մոդուլների՝ «Կարիքահեն հարակից կարողություններ» բաժնի ուսումնական ծրագրի շրջանակներում առավելագույնը 8 նյութերի պատրաստում, քննարկում, վերանայում, ավարտական տարբերակների պատրաստում և դասավանդում</p>	<p>32 օր</p>
<p>8. ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային առկա ձևաչափով ուսուցման «Պետական բյուջեների ոլորտներում մասնակցության ապահովում և շահերի պաշտպանության իրականացում» մոդուլի ուսուցման ծրագրի մշակում, քննարկում, վերանայում և ավարտական տարբերակի պատրաստում,</p>	<p>10 օր</p>
<p>9. ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների</p>	<p>20 օր</p>

<p>բյուջետային առկա ձևաչափով ուսուցման «Պետական բյուջեների ոլորտներում մասնակցության ապահովում և շահերի պաշտպանության իրականացում» մոդուլի ուսուցման ծրագրի շրջանակներում թիրախային 4 թեմաներով առավելագույնը 4 նյութերի պատրաստում, քննարկում, վերանայում, ավարտական տարբերակների պատրաստում և դասավանդում,</p>	
<p>10. Պետական մարմինների կողմից մշակած բյուջետային հայտերի և նախագծերի ծրագրի շահառու ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպվելիք հանրային քննարկումներին և երկուստեք հանդիպումներին մասնակցություն,</p>	18 օր
<p>11. Ծրագրի շահառու ՔՀԿ-ների կողմից ներկայացրած հանրային քաղաքականությունների բարելավմանն ուղղված փաստարկված վերլուծությունների և առաջարկությունների ներկայացում,</p>	18 օր
<p>12. Ծրագրի շահառու ՔՀԿ-ներին ծրագրի թիրախ 4 ոլորտներում Հանրային քաղաքականությունների բարելավման և ՇՊ քարոզարշավների և իրազեկման մոդելային պլանների մշակում և ՔՀԿ-ներին դրանց վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,</p>	18 օր
<p>13. Ծրագրի շրջանակներում կազմակերպվելիք միջոցառումներին մասնակցություն և ծրագրի շահառու ՔՀԿ-ներին ու երիտասարդ մասնագետներին շահերի պաշտպանության և կարիքահեն կարողությունների զարգացման ոլորտներում ցուցաբերած աջակցության և ձեռք բերված արդյունքների ներկայացում:</p>	3 օր

7. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության գնման մրցույթի իրականացման նպատակով «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության <https://armla.am/> պաշտոնական վեբ կայքում հրապարակվում է գնման մրցույթի հայտարարություն: Հայտարարությունը հրապարակվում է հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալու օրվանից՝ 14.01.2023թ., առնվազն տաս օր առաջ:

Հայտերի ներկայացման կարգը

Հետաքրքրված անձինք կարող են մինչև 2023 թվականի հունվարի 14-ը, ժամը՝ 18.00-ը ներառյալ, հայտը (կից փաստաթղթերով հանդերձ), հայտարարությունը, ինքնակենսագրականը (CV) կամ իրավաբանական անձի դեպքում հիմնական փորձագետների ինքնակենսագրականները (CV-ները) ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ info@armia.am, նամակի թեմայի տողում նշելով՝ «Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության գնման մրցույթի հայտ» կամ հայտը (կից փաստաթղթերով հանդերձ), հայտարարությունը, ինքնակենսագրականը (CV) կամ իրավաբանական անձի դեպքում հիմնական փորձագետների ինքնակենսագրականները (CV-ները) ներկայացնել Երևան, Նալբանդյան 7, գրասենյակային տարածք հասցեում գտնվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն փակ ծրարով (ծրարը ստորագրված և/կամ կնիքված) ներկայացնել հայտը Խնդրում ենք ծրարի վրա նշել «Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության գնման մրցույթի հայտ»: Անհրաժեշտության դեպքում, մրցութային հանձնաժողովը հայտ ներկայացրած անձից կարող է պահանջել հավելյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հայտերը գնման մրցութային հանձնաժողովի կողմից կբացվեն 2023 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 12.00-ին:

Մրցութին կարող են դիմել և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք (այդ թվում անհատ ձեռնարկատերերը):

Մրցույթում հաղթած անձի հետ Պատվիրատուն կկնքի ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:

Այն անձը կմասնակցի որպես Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության գնման մրցութին, որը սահմանված ժամկետներում կներկայացնի փորձագետ(ներ)ի ծառայության գնման մրցութին մասնակցելու ամբողջական հայտ:

Գնահատման փուլերը

Մրցույթի գնահատման փուլերն են.

1. Վարչական համապատասխանության գնահատման փուլը.

Գնահատման այս փուլում հայտերի ստացնում է էլեկտրոնային կամ առձեռն եղանակով և դրանց ստացման վերաբերյալ ստացականի ուղարկումը կամ տրամադրումը:

Գնահատման այս փուլում գնահատման չափորոշիչը ներկայացված հայտի համապատասխանությունն է սույն մրցույթի տեխնիկական առաջադրանքին:

Գնման մրցութային հանձնաժողովի կողմից վարչական համապատասխանության գնահատման փուլում մրցութին մասնակից անձի կողմից ներկայացված հայտը սույն տեխնիկական առաջադրանքին և մրցույթի մյուս պայմաններին համապատասխանելու դեպքում, տվյալ հայտը անցնում է գնման մրցույթի տեխնիկական և գնահատման փուլեր:

Պայմանագրի կատարման վրա ազդող ցանկացած հիմնական ֆորմալ սխալ կամ լուրջ սահմանափակում կամ մրցակցության խեղաթյուրումը հանգեցնում է համապատասխան

հայտի մերժմանը: Մրցութային հանձնաժողովը այս փուլում նաև պետք է ստուգի ազգության կանոնի պահպանումը:

2. Տեխնիկական գնահատման փուլը.

Տեխնիկական գնահատման փուլում մրցութային հանձնաժողովը ուսումնասիրում է հայտերի տեխնիկական առաջարկները: Հայտերի տեխնիկական առաջարկը գնահատելիս հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ յուրաքանչյուր հայտի տեխնիկական առաջարկին տալիս է տեխնիկական գնահատական առավելագույնը 100 միավորից՝ համաձայն ստորև բերված տեխնիկական գնահատման չափորոշիչների և գնահատման միավորների աղյուսակի:

Տեխնիկական գնահատման չափորոշիչների և գնահատման միավորների աղյուսակ.

Տեխնիկական գնահատման չափորոշիչ	Գնահատման միավոր
Առաջարկվող մեթոդաբանության որակն ու նորարարությունը:	Առավելագույնը 25 միավոր
Նախկին փորձառությունը՝ շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների մշակման, ՔՀԿ-ների կարողությունների զարգացման, բյուջետային հայտերի հասարակական քննարկումների, ինչպես նաև ՔՀԿ-ների և երիտասարդների ուսուցման ոլորտներում:	Առավելագույնը 50 միավոր
Փորձագիտական ծառայությունը՝ սույն տեխնիկական նկարագրում նշված ժամկետներին համապատասխան լինելը:	Առավելագույնը 25 միավոր
Ընդհանուր՝	Առավելագույնը 100 միավոր

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն փաստաթղթային ապացույցներ առաջարկվող փորձագետի կամ հիմնական փորձագետների համար: Սա ներառում է CV-ում նշված դիպլոմների պատճենները և գործատուի վկայականները կամ տեղեկանքները, որոնք հաստատում են CV-ում նշված մասնագիտական փորձը: Հաշվի կառնվեն միայն փաստաթղթային ապացույցներով հաստատված դիպլոմները և փորձը:

Երբ մրցութային հանձնաժողովը սահմանում է յուրաքանչյուր հայտի տեխնիկական առաջարկի միջին տեխնիկական միավորը (յուրաքանչյուր քվեարկող անդամի կողմից տրված տեխնիկական միավորների մաթեմատիկական միջինը), 75 միավորի շեմից ցածր ստացած տեխնիկական առաջարկի հետևանքով տվյալ հայտը ավտոմատ կերպով մերժվում է: Եթե ոչ մի հայտի տեխնիկական առաջարկ չի հավաքում 75/100 միավոր և ավելի, ապա սույն մրցույթը չեղյալ է հայտարարվում:

«Տեխնիկապես ընդունված» են հայտարարվում միայն այն հայտերը, որոնց տեխնիկական առաջարկները ստանում են 100 միավորից առնվազ 75 կամ ավելի միջին տեխնիկական միավոր:

Մրցույթի տեխնիկական գնահատման ամփոփագրի նմուշ.

	Առավելագույն հնարավոր միավորը	Հայտ 1	Հայտ 2	Հայտ 3
Գնահատող Ա Տեխնիկական միավոր	100	55	88	84
Գնահատող Բ Տեխնիկական միավոր	100	60	84	82
Գնահատող Գ Տեխնիկական միավոր	100	59	82	90
Ընդամենը	300	174	254	256
Միջին տեխնիկական միավոր (մաթեմատիկական միջին)		$174/3 = 58.00$	$254/3 = 84.67^*$	$256/3 = 85.33^*$
Կշռված տեխնիկական միավորը (դիտարկվող հայտի միջին տեխնիկական միավորը / լավագույն տեխնիկական հայտի միջին տեխնիկական միավորը x 100)		Հայտը մերժվել է**	$84.67/85.33 \times 100 =$ 99.22	$85.33/85.33 \times$ 100 =100.00

* Հաշվը տասնորդական կետից հետո կլորացվում է երկու նիշի:

** Ֆինանսական գնահատման փուլ են անցնում միայն առնվազն 75 միավոր միջին տեխնիկական միավոր ստացած հայտերը:

3. Ֆինանսական գնահատման փուլը:

Ֆինանսական գնահատման փուլում գնահատվում են միայն առնվազն 75 միավոր միջին տեխնիկական միավոր ստացած հայտերը: Այս փուլում պայմանագրի համար հատկացված առավելագույն բյուջեն գերազանցող հայտերը համարվում են անընդունելի և մերժվում են:

Այնուհետև մրցութային հանձնաժողովն այնուհետև անցնում է տարբեր հայտերի գնային առաջարկների ֆինանսական համեմատությանը ըստ ստորև բերված ֆինանսական գնահատման չափորոշիչի և գնահատման միավորի աղյուսակի.

Ֆինանսական գնահատման չափորոշիչի և գնահատման միավորի աղյուսակ.

Ֆինանսական գնահատման չափորոշիչ	Գնահատման միավոր
<p>Ֆինանսական գնահատում.</p> <ul style="list-style-type: none"> Գնային առաջարկի արդյունավետությունը: 	Առավելագույնը 100 միավոր

Ընդհանուր՝	Առավելագույնը 100 միավոր
------------	--------------------------

Ամենացածր գնային առաջարկ ունեցող հայտը ստանում է 100 միավոր: Մյուս հայտերին միավորներ են շնորհվում հետևյալ բանաձևով.

Ֆինանսական միավոր = (նվազագույն գնային առաջարկ/դիտարկվող հայտի գնային առաջարկ x 100):

Մրցույթի ֆինանսական գնահատման ամփոփագրի նմուշ.

	Առավելագույն հնարավոր միավորը	Հայտ 1	Հայտ 2	Հայտ 3
Ընդհանուր գինը		Տեխնիկական գնահատման արդյունքում հայտը մերժվել է	ՀՀԴ 10 000 000	ՀՀԴ 10 200 000
Ֆինանսական միավոր = (նվազագույն գնային առաջարկ/դիտարկվող հայտի գնային առաջարկ x 100)			100	$10\,000\,000 / 10\,200\,000 \times 100 = 98.04$

4. Գնահատող հանձնաժողովի եզրահանգումները.

Փողի համար լավագույն արժեքը սահմանվում է տեխնիկական որակը գնի նկատմամբ կշռելով 80/20 հարաբերությամբ: Դա արվում է բազմապատկելով.

- հայտի տեխնիկական առաջարկներին շնորհված միավորները 0,80-ով,
- հայտի գնային առաջարկներին շնորհված միավորները 0,20-ով:

Մրցույթի համապարփակ գնահատման ամփոփագրի նմուշ

	Առավելագույն հնարավոր միավորը	Հայտ 1	Հայտ 2	Հայտ 3
Կշռված տեխնիկական միավոր x 0.80		Տեխնիկական գնահատման արդյունքում հայտը մերժվել է	$99.22 \times 0.80 = 79.38$	$100.00 \times 0.80 = 80.00$
Ֆինանսական միավոր x 0.20			$100.00 \times 0.20 = 20.00$	$98.04 \times 0.20 = 19.61$
Ընդհանուր միավոր			$79.38 + 20.00 = 99.38$	$80.00 + 19.61 = 99.61$
Վերջնական վարկանիշ			2	1

Ստացված, կշռված, տեխնիկական և ֆինանսական միավորներն այնուհետև գումարվում են իրար՝ որոշելու համար ամենաբարձր միավոր ստացած հայտը, այսինքն՝ լավագույն որակ-գին

հարաբերակցությունը: Անհրաժեշտ է հաշվարկները կատարել խստորեն վերը նշված հրահանգներին համապատասխան:

Գնման մրցույթի գնահատումը կիրականացնի «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահի կողմից ստեղծած «Շահերի պաշտպանության, հանրային քաղաքականությունների, ՔՀԿ-ների զարգացման և բյուջեի հարցերով փորձագետ(ներ)ի ծառայության գնման մրցույթի մրցութային հանձնաժողովը՝ 3 հոգու կազմով: Մրցույթի հաղթող կճանաչվի և մրցութային հանձնաժողովի առաջարկությամբ փորձագետ(ներ)ի ծառայությունների պայմանագիրը կշնորհվի այն անձին, որի ներկայացրած հայտը կստանա հանրագումարային ամենաբարձր ընդհանուր միավորը՝ պայմանով, որ մրցույթի մասնակցի կողմից բացառման և ընտրության չափանիշների համար ներկայացված փաստաթղթային ապացույցները ստուգված և ընդունելի են:

Մրցույթի հայտերը բացելուց և հայտերը գնահատելուց հետո գնման մրցութային հանձնաժողովը կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Արձանագրությունը պարունակում է՝

- պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը.
- գնման նպատակը և գնման առարկայի բնութագրերի համառոտ նկարագիրը,
- մասնակիցներին ներկայացված փաստաթղթերի պատճենները.
- տեղեկատվություն՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին (եթե առկա է).
- տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.
- հայտերը ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու հասցեները.
- տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
- տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
- յուրաքանչյուր մասնակցի առաջարկած տեխնիկական և գնային առաջարկները.
- մրցույթը չկայացած հայտարարելու դեպքում՝ դրա հիմնավորումը.
- գնահատման բոլոր փուլերի գնահատման հակիրճ նկարագրությունն ու արդյունքները,
- հաղթող մասնակցի անուն, ազգանունը կամ անվանումը՝ իրավաբանական անձի և ԱԶ-ի դեպքում,
- պահեստային թեկնածուի անուն, ազգանունը կամ անվանումը՝ իրավաբանական անձի և ԱԶ-ի դեպքում,
- նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Ուշադրություն

Ներկայացված պահանջներին չհամապատասխանող, հայտերի ներկայացման կարգի խախտմամբ փաստաթղթեր ներկայացրած, այդ թվում սահմանված ժամկետից ուշ հայտեր ներկայացրած անձանց, ինչպես նաև ԵՄ սանկցիոն ցանկում ընդգրկված անձանց հայտերը չեն դիտարկվի:

Սույն գնման մրցույթի համար «Ծագման կանոնի (Rule of origin) պահպանման սկզբունքը կիրառել չէ, իսկ ազգության կանոնի պահպանման սկզբունքը (rule of nationality) գործում է: Սույն գնման մրցույթի մրցութային հայտարարությամբ և տեխնիկական առաջադրանքով բոլոր չկարգավորված հարցերի դեպքում գնման մրցութային հանձնաժողովը առաջնորդվում է ԵՄ ՊՌԱԳ կարգավորումներով (EU PRAG regulations):

